

2022

**ԲԱՅՕՂՅԱ ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻ**

ՀՀ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Իսահակ  
Գասպարյան փողոց հ. 34

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ /լրամշակված/

ԿԱՏԱՐՈՂ  
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝  
«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՂԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ

Ա/Ձ Ա. Գալոյան  
ՀՀ ք. Երևան Սևանի 5  
Հեռ. բջջ. +374 99 994222  
galoyan.aram@gmail.com



**ԲԱՑՕԴՅԱ ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻ**

ՀՀ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Իսահակ Գասպարյան փողոց հ. 34

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ**

**ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ**

**/լրամշակված/**

«Արմենիա Միջազգային օդանավակայաններ»  
ՓԲԸ տնօրեն



**Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ**



Երևան 2022

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	4
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն .....	4
1.2	Հապավումներ .....	4
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը .....	5
1.4	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը .....	6
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնատեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) .....	9
1.5.1	<i>Ներկա վիճակի նկարագիր</i> .....	9
1.5.2	<i>Նախատեսվող գործունեության բնութագիր</i> .....	9
1.5.3	<i>Նախատեսվող գործունեության իրավիճակային հատակագիծ</i> .....	17
1.5.4	<i>Շինարարական հրապարակի կազմակերպման հատակագիծ</i> .....	21
1.5.5	<i>Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց</i> .....	22
1.5.6	<i>Լուսավորության սյուների տեղադիրք</i> .....	23
1.5.7	<i>Կանաչապատման սխեմա</i> .....	24
2.	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ .....	25
2.1	Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը.....	26
2.2	Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները.....	27
2.2.1	<i>Նյութերի և բնատեսուրսների օգտագործում</i> .....	27
3.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ .....	29
3.1	Ֆիզիկաաշխարհագրական պայմանները.....	29
3.2	Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը.....	30
3.3	Կլիման .....	30
3.4	Օդային ավազան.....	35
3.5	Ջրային ռեսուրսներ .....	39
3.6	Հողերի նկարագիրը.....	39
3.7	Հողային ռեսուրսներ .....	39
3.8	Բուսական աշխարհ .....	40
3.9	Կենդանական աշխարհ .....	40
3.10	Պատմամշակութային հուշարձաններ.....	41
3.11	Թափոնների կառավարում .....	42
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	43
4.1	Ռիսկերի գնահատում .....	43
4.2	Արտանետումների աղբյուրները .....	44
4.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն .....	44
4.3.1	<i>Մթնոլորտային օդ</i> .....	44
4.3.2	<i>Ջրային ռեսուրսներ</i> .....	44
4.3.3	<i>Հողային ռեսուրսներ</i> .....	45
4.3.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i> .....	45
4.3.5	<i>Հակահրդեհային միջոցառումներ</i> .....	46
4.3.6	<i>Աղմուկ և թրթռում</i> .....	46
4.3.7	<i>Թափոնների կառավարում</i> .....	47
5.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ .....	47
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	49
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	52
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	54
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	55

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող`	«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՑԱՆՆԵՐ» ՓԲԸ
Իրավաբանական հասցե`	Հայաստան, 0042, Երևան «Զվարթնոց» օդանավակայան
Նախատեսվող գործունեության հասցեն`	ՀՀ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Իսահակ Գասպարյան փողոց հ. 34
Նախնական գնահատման հայտի մշակող`	Ա/Չ Արամ Գալոյան ՀՀ ք. Երևան Սևանի փ. շ. 86/2 <a href="mailto:galoyan.aram@gmail.com">galoyan.aram@gmail.com</a>
Հեռախոս`	+374 99994222

1.2 Հապավումներ

ՀՀ` Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ` Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՄՊԸ` Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ` պետական ոչ առևտրային կազմակերպություն

### 1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից անվճար բացօդյա ավտոկայանատեղի «Զվարթնոց» օդնավակայանի հարևանությամբ:

Բացօդյա ավտոկայանատեղիի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Իսահակ Գասպարյան փողոց հ. 34 հասցեում:

Բացօդյա ավտոկայանատեղիի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան<sup>1</sup>:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բացօդյա ավտոկայանատեղիի շինության կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող

<sup>1</sup> ՀՀՀՆ 30-01-2014 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՍՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ ՀՀՀՆ IV-11.03.03-02 ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 102-Ն ՀՐԱՄԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021Թ. ՄԱՐՏԻ 31 ԹԻՎ 372-Ն ՀՐԱՄԱՆ

գործունեության նախնական գնահատման փուլում Երևան քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

#### 1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Իսահակ Գասպարյան փողոց հ. 34 հասցեում բացօդյան ավտոկայանատեղիի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

**ՀՀ Սահմանադրություն** (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք** (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը

հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք** (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

**«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)** - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

**«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը** (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

**«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)** - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

**«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005)** - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

*«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք* (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

*«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք* (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

*«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ.*

*«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 2000թ.*

*«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը,*

*«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ. N 72-Ն որոշումը*

*«ՀՀ ջրային օրենսգրք» 2002թ.*

*«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք 27.11.2006*

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:



1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

**1.5.1 Ներկա վիճակի նկարագիր**

Բացօդյան կայանատեղիի կազմակերպման համար նախատեսված տարածքը գտնվում է ՀՀ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Իսահակ Գասպարյան փողոց հ. 34 հասցեում:

«Զվարտնոց» օդանավակայանի հողամասի մակերեսը կազմում է 348.502138հա + 1.655832հա՝ կադաստրային ծածկագրերը՝ 01-007-0571-0001, 01-007-0571-0007, 01-007-0571-0009:

Հողամասի բնութագրերը՝

- Նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների
- Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Տրանսպորտի, էներգետիկայի
- Գրանցված իրավունքի տեսակը՝ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար: Հողամասի ավտոկայանատեղի կազմակերպման հատվածը ազատ է կառուցապատումից:

Գոյություն ունեցող տարածքը գտնվում է H=860,64-ից H=856,89 բարձարնիշերի սահմաններում: Գոյություն ունեցող տարածքի երկարությունը, ըստ իրականացված գեոդեզիական հանույթի, կազմում է 315,00մ, լայնությունը 12,20մ-ից 105,00մ: Գեոդեզիական հանույթը իրականացված է ARM WGS 84 տեղական կոորդինատային ցանցին համապատասխան:

Համաձայն գեոլոգիական հանույթի գոյություն ունեող տարածքի վերին շերտը լիցքային գրունտ է տարատեսակ շինարարական աղբով:

Տարածքում բուսականությունը բացակայում է:

**1.5.2 Նախատեսվող գործունեության բնութագիր**

Ավտոկայանատեղիի նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Իսահակ Գասպարյան փողոց հ. 34 հասցեում, Զվարթնոց օդանավակայանի հողամասի հյուսիս-արևմտյան կառուցապատումից ազատ տարածքի վրա:

Նախագծման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական պահանջները, գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերը և N 01/18-07/2-87/13-52 ՃՀԱ-ն, տրված 17.02.2022 թ.-ին:

Պատվիրատուի կողմից առաջարկված տարածքը գտնվում է Երևանի «Զվարթնոց» օդնավակայանի հարևանությամբ:

Համաձայն գեոլոգիական հանույթի գոյություն ունեող տարածքի վերին շերտը լիցքային գրունտ է տարատեսակ շինարարական աղբով: Նախագծով նախատեսված է հեռացնել գոյություն ունեցող տարածքի վերին շերտը 30սմ հաստությամբ, որի ծավալը կազմում է 1302,46խմ: Նախատեսվում է քանդված հողային զանգվածը հեռացնել ըստ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ցուցումի:

Վերը նշված աշխատանքները իրականացնելուց հետո նախատեսված է իրականացնել տարածքի հարթեցում և հիմնատակի պատրաստում նախագծով նախատեսված ճանապարհային պատվածքը տեղադրելու համար, այդ աշխատանքների համար նախագծով նախատեսված է իրականացնել 275,19խմ հանույթ և 298,15խմ լիցքային աշխատանք: Մույն նախագծով նախատեսված է իրականացնել ներքոբերված պատվածքը.

Հավասարեցնող կոպճավազային շերտ 10սմ հաստությամբ ԴՕՇՏ 8267-93

Խճավազային շերտ C-5 20սմ հաստությամբ ԴՕՇՏ 25607-2009

Խոշորահատիկ ա/բետոնե շերտ 6սմ հաստությամբ ԳՕՍՍ 9128-2013/մոդիֆիկացված/ «Բ» տիպի 1-ին մակնիշի

Մանրահատիկ ա/բետոնե շերտ 4սմ հաստությամբ ԳՕՍՍ 9128-2013 /մոդիֆիկացված/ «Բ» տիպի 1-ին մակնիշի

Մինչև ճանապարհային պատվածքի տեղադրումը նախատեսված է իրականացնել արդեն հարթեցված հիմնատակի խտացման աշխատանքներ 10-15տ քաշ ունեցող վիբրոզլոններով: Խտացման աշխատանքները պետք է իրականացնել պարտադիր ջրելու եղանակով, ապահովելով գոյություն ունեցող գրունտի օպտիմալ խոնավության պահանջը: Խտացման ընթացքում սպունգային երևույթները պետք է բացառվեն: Այն դեպքերում երբ աշխատանքների ընթացքում կբացահայտվի սպունգային երևույթներ, ապա այդ հատվածները պետք է քանդվեն՝ ոչ պակաս 30սմ հաստությամբ և փոխարենը պետք է տեղադրել լիցքային գրունտ կամ խճային հիմք: Նշված շերտերը պետք է խտացվեն : Փոխարինվող հատվածի չափը պետք է լինի ոչ պակաս 1.50x1.50մ չափերը: Խտացման ընթացքը ապահովելու համար փոխարինվող հատվածում կամ հատվածներում նոր գրունտի հաստությունը պետք է լինի ոչ պակաս 40սմ-ը: Խտացումը ապահովելուց հետո վերնի ավել մնացած շերտը պետք է կտրվի ավտոգրեյդերով՝ ապահովելով նվազագույնս 30սմ փոխարինվող շերտի հաստությունը: Շերտի կոնստրուկտիվ շեղումը չպետք է գերազանցի +1սմ և - 4սմ-ը:

### **ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

Հողակտորի մակերեսն է - 348.502138հա + 1.655832հա

Բացօդյա ավտոկայանատեղիի մակերես – 2982 քմ

Կանաչապատման մակերես – 1599.68մ<sup>2</sup>/խոտածածկ/

Կայանվող ավտոմեքենաների քանակ – 107 հատ

Մուտքի և ելքի ճանապարհներ – ընդհանուր 188մ երկարությամբ, 4,5մ լայնությամբ, պատվածքի ընդհանուր հաստությունը՝ 40սմ, ընդհանուր ծավալը՝ 338.74մ3:

Նախագիծը մշակված է համաձայն.

ՀՀՇՆ IV-11.03.03-02 ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐ

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող ավտոկայանատեղի: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

**ՊԱՏՎԱԾՔ**

*Հավասարեցնող կոպճավազային շերտ*

Շերտի տեղադրումը պետք է լինի համատարած և խտացման աշխատանքները պետք է իրականացնել ջրելով և 10-15տ քաշ ունեցող գլոբններով: Ավտոկայանատեղի տարածքից պետք է վերցնել խտացման լաբորատոր տեստ 1000քմ-ին 1 հատ: Ըստ ներկայացված նախագծի անհրաժեշտություն է առաջանում ամբողջ տարածքից վերցնել 5 հատ խտացման փորձանմուշ, որի 3 հատ ավտոկայանատեղիից, 1 հատ մուտքի ճանապարհից ու 1 հատ ելքի ճանապարհից:

Կոպճային նախապատրաստական շերտի խտացումը կարող է իրականացվել հարթ գլոբններով, մեխանիկական տոփանիչներով կամ այլ համապատասխան սարքավորումներով՝ հաստատված տեխնիկական վերահսկողության թիմի կողմից: Այնտեղ, որտեղ նախապատրաստական շերտի խտացումն իրականացվում է ձեռքով կամ մեխանիկական տոփանմամբ, նյութը պետք է տեղադրված լինի հորիզոնական շերտերով՝ խտացումից հետո ոչ ավել, քան 150 մմ հաստությամբ: Նախագծային հաստությունից թույլատրելի կոնստրուկտիվ շեղումը պետք է լինի ոչ ավել քան ±1սմ-ը:

**Խճավազային շերտ C-5**

Խճավազային խարնուրդը նախատեսված է իրականացնել 20սմ հաստությամբ: Խճավազային խարնուրդը պետք է տեղադրել համատարած 20սմ հաստությամբ: Խճավազային խարնուրդի տեղադրման նշահանրումը պետք է լինի տախեումետրով: Նախագծային հաստությունից թույլատրելի կոնստրուկտիվ շեղումը պետք է լինի ոչ ավել քան ±1սմ-ը: Խտացման գործակիցը պետք է լինի ոչ պակաս 0,98-ը /98%/: C-5 տիպի խճավազային խարնուրդի մեջ պետք է բացառել կավային մասնիկների առկայությունը: C-5 տիպի խարնուրդի հաստիկաչափական կազմը 20սմ հաստության և 100քմ աստարածքի համար պետք է լինի ըստ ներքոբերվածի

Խճավազային հիմք (C-5) h=20սմ 100մ<sup>2</sup> համար

խիճ (40-70) 10% - 2,6մ<sup>3</sup>

խիճ (20-40) 35% - 9,1մ<sup>3</sup>

խիճ (10-20) 20% – 5,2մ<sup>3</sup>

խիճ (5-10) 10% – 2,6մ<sup>3</sup>

խիճ (0-5) ավազ 25% – 6,5մ<sup>3</sup>

ջուր-1.1մ<sup>3</sup> – անհրաժեշտ խտացումը ապահովելու համար:

**ԱՍՖԱԼՏ ԲԵՏՈՆ**

Ասֆալտ բետոնն աշխատանքների ժամանակ պետք է առաջնորդվել ԳՈՍՏ 9128-2013 և BCH 123-77 նորմատիվային պահանջներին համաձայն: Ասֆալտապատման աշխատանքները իրականացնելիս Կապալառուն պարտավոր է իրականացնել բոլոր անհրաժեշտ փորձարկումները, որոնք պահանջված են ՀՀ տարածքում գործող նորմատիվային պահանջներով:

Ասֆալտ բետոնն աշխատանքների ժամանակ պետք է ապահովվի ԳՈՍՏ 9128-2013 նորմատիվային պահանջի աղյուսակ 2-ի և 3-ի պահանջները / ԳՈՍՏ 9128-2013 կետ 4.1.8 /: Նախագծով նախատեսվում է իրականացնել մանրահատիկ և խոշորահատիկ ա/բետոն շերտ «Բ» տիպի 1-ին մակնիշի:

Ասֆալտ-բետոնն պատվածքի փորձարկումները պետք է իրականացվի համաձայն ՀՀ տարածքում ընդունված նորմատիվային պահանջների ԳՈՍՏ 30630.1.1-99: Ա/բետոնն ծածկի յուրաքանչյուր շերտից օրեկան պետք է վերցնել նվազագույնը 4 հատ փորձանմուշ :

Ա/բետոնն ծածկի հաստությունների կոնստրուկտիվ շեղումը պետք է լինի Համաձայն ՀՀՇՆ IV 11.05.02-99 նորմայի պահանջների համաձայն: Ասֆալտ բետոնն խարնուրդի տեղադրման աշխատանքները պետք է համապատասխանեն ՀՀՇՆ IV 11.05.02-99 նորմայի պահանջներին: Նորմատիվային պահանջներից ավել շեղման ժամանակ պատվիրատուն իրավունք ունի չվճարելու և չընդունելու՝ ա/բետոնն պատվածքը տեղում պահպանելով, կամ քանդել տալով իրականացված շերտը և այն նորից իրականացնելով՝ ըստ նախագծով հաստատված հաստությամբ:

**Պահանջներ Բիտումի վերաբերյալ**

Նշված աշխատաբնքները պետք է արձանագրվի պատվիրատուի կողմից և դրա համար լրացուցիչ վճարվի: Համաձայն ГОСТ 22245-90-ի 60-90 բիտումի փխրման /ճաքում/ ջրմասստիճանը կազմում է -

*Շ: 90-130 տիպի բիտումի փխրման /ճաքում/ ջրմասստիճանը կազմում է -17.0 CO: Հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ նման բացասական ջերմաստիճանային պայմաններում ա/բետոնն պատվածքի վրա առաջանում են ճաքեր, որոնք հետագայում խրախուսում են պատվածքի քայքայմանը, մեծ փոսերի առաջացմանը, հիմքի խարխլմանը և այլն: Մոդիֆիկացված բիտումով ա/բետոնն խարնուրդ պատրաստելու Կապալառուի գործարանը պետք է համապատասխանի Մոդիֆիկացված բիտումով ա/բետոնն խարնուրդ պատրաստելու ստանդարտին: Հաշվի առնելով վերը նշված պահանջները ա/բետոնն մոդիֆիկացումը պետք է իրականացնել SuperPlast և Iterlene IN/400 կամ նմանատիպ պոլիմեռային հավելումներով:*

SuperPlast-ի կամ նմանատիպ պոլիմեռային հավելանյութերի քանակը պետք է լինի ոչ պակաս 6%-ը բիտումի քանակից: Բիտումի քանակը պետք է համապատասխանի ԳՕՍՍ 9128-2013 նորմատիվային պահանջներին:

Iterlene IN/400 կամ նմանատիպ պոլիմեռային հավելանյութերի քանակը պետք է լինի ոչ պակաս 0,25-0,30%-ը բիտումի քանակից: Բիտումի քանակը պետք է համապատասխանի ԳՕՍՍ 9128-2013 նորմատիվային պահանջներին:

Նմանատիպ նյութերի օգտագործումը պետք է համաձայնեցնել տեխնիկական հսկողության և պատվիրատուի համապատասխան ներկայացուցիչների հետ: Համաձայնեցումից հետո հնարավոր է այդ նյութերի օգտագործումը:

**Խտացում և տեսքի բերում**

Ամբողջ ընթացքում առնվազն 2 գլղոն պետք է լինի առկա, մեկը ինքնաշարժ պնևմատիկ գլղոն 20-25տ քաշով, մյուսը՝ 8-12տ քաշով պողպատե անիվով: Անհրաժեշտության դեպքում Կապալառուն պետք է օգտագործի հարկ եղած քանակությամբ գլղոններ, որպեսզի ըստ նորմատիվային պահանջների, արդյունավետորեն ու անընդհատորեն ապահովի ասֆալտի սահմանված խտությունը և մակերևույթային բնութագրերը: Ասֆալտբետոն խառնուրդը փռելուց անմիջապես հետո պետք է մակերեսի հարթությունը ստուգել և անհարթությունները վերացնել: Խառնուրդի կաշեղը պողպատի անիվով գլղոններին կանխելու համար անիվները պետք է պատշաճ չափով խոնավ պահվեն, սակայն չափից ավել ջուր չի թույլատրվում: Չափից ավել ջուր ասելով պետք է հասկանալ հետևյալը՝ նոր տեղադրված և խտացման պրոցեսում գտնվող ա/բետոնե պատվածքի մակերևույթի վրա չպետք է լինեն ջրի կուտակումներ, առավել ևս հոսող ջրի հետքեր: Գլղոնների անիվների վրա բացի ջրից չի թույլատրվում բենզին, դիզել, յուղ կամ այլ լուծույթների կիրառումը: Շերտի ընդունումը պետք է կատարվի 3.0մ երկարությամբ չափաձողով: Եթե լայնական կամ երկայնական ուղղություններով լուսային բացվածքը մեծ է 6.0մ-ը ապա այն համարվում է թերություն և այդ թերությունը պետք է վերացվի Կապալառուի հաշվին տեխնիկական հսկողության կողմից նշված ժամանակահատվածում: Բացի այն, որ շերտի ընդունման և ստուգման համար պետք է օգտագործել նորմատիվային պահանջով նախատեսված ստանդարտ չափաձողեր, շերտի ընդունման համար պարտադիր պայման է նաև նախագծային նիշերի համապատասխանումը: Շերտի ընդունման աշխատանքները պետք է համապատասխանեն ՀՀՇՆ IV 11.05.02-99 նորմայի պահանջներին:

**Եզրաքարերի տեղադրում**

Եզրաքարերի տեղադրումը պետք է իրականացնել համապատասխան ԴՕՇՏ 32018-2012-ի համապատասխան: Բազալտե և բետոնե եզրաքարերը նախատեսված է տեղադրել B15 դասի բետոնե հիմքի վրա համապատասխանաբար 0,061իմ և 0,025իմ բետոնե նյութաձախսով 1գմ-ի համար: Եզրաքարերի տեղադրումը պետք է իրականացնել առանց որևէ շեղումների: Արտաքննապես շեղում թույլատրվում է մինչև 1մմ /հորիզոնական և ուղղաձիգ հարթության մեջ/: Բազալտե և բետոնե եզրաքարերի հիմքերի տեղադրումը պետք է լինի

գծագրով նախատեսված չափերին համապատասխան: Կոր հատվածներում բազալտե եզրաքարերի երկարությունը պետք է լինի ոչ ավել քան 0,5մ-ը:

**Պահանջների շինարարական աշխատանքների համար**

Շինարարական աշխատանքների ժամանակ շինհրապարակը պետք է փակվի համապատասխան ցանկապատով: Ժամանակավոր ցանկապատման համար լրացուցիչ վճարումներ և առանձին ծավալներ նախատեսված չէ: Շինարարական աշխատանքների ժամանակ կապալառուն պետք է ներկայացնի իր կողմից կազմակերպված շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույցային գրաֆիկը և աշխատանքների կազմակերպման սխեման, դրանք պետք է հաստատվի Պատվիրատուի կողմից: Շինարարական աշխատանքների ժամանակ պետք է ապահովվի ժամանակավոր ջրահեռացումը: Կապալառուի կողմից ներկայացված աշխատանքների կատարման գրաֆիկը Պատվիրատուի կողմից պետք է հաստատվի 7 աշխատանքային օրվա ընթացքում: Յուրաքանչյուր օրվա ուշացման համար Պատվիրատուն պետք է Կապալառուին տրամադրի համապատասխան շինարարական աշխատանքային օրերի համար ավելացում: Շինարարական աշխատանքների ժամանակ Կապալառուի և Պատվիրատուի անձնակազմը պետք է ունենա համապատասխան անձնական պաշտպանական միջոցներ և հրահանգավորում:

Դրանք են

1. Անվտանգության սաղավարտ
2. Դեղին կամ նարնջագույն ժակետ՝ լուսանդրադարձնող
3. Անվտանգության կոշիկներ /համապատասխան շին աշխատանքների բնույթի/
4. Անձնակազմի հրահանգավորում ըստ պաշտոնի և պատասխանատվության
5. Շինհրապարակում պետք է տեղադրված լինի արտակարգ իրավիճակներում համապատասխան ծառայությունների հեռախոսահամարները
6. Շինհրապարակի պատասխանատուն պետք է հրահանգավորված լինի և պետք է հետևի անձնակազմի հրարահագավորման պատշաճ իրականացնելու համար:
7. Շինհրապարակ կողմնակի անձանց մուտքը պետք է արգելվի: Այցելուներին պետք է իրականացնել կարճ հրահանգավորում, որը պահանջված է օրենքով:
8. Շինհրապարակ պատվիրատուի մուտքը պետք է լինի համապատասխան հրահանգավորումով: Տեղամասի Պատասխանատուն պետք է իրականացնի համապատասխան հրահանգավորում Պատվիրատուի կողմից լիազորված անձի կամ անձանց: Պատվիրատուն մուտք է պետք է գործի շինհրապարակ համապատասխան ԱՊՄ- ների օգտագործմամբ համապատասխան հրահանգավորում անցնելուց հետո՝ ներքոբերված օրենսդրական փաստաթղթերի հիման վրա:

**Ջրամատակարարում և ջրահեռացում**

Հակահրդեհային ջրամատակարարումը նախատեսվում է ավտոկայանատեղիի արտաքին հրդեհաշիջման համար: Մտող խողովակի միացումը իրականացվում է տարածքից

մոտ 70մ հեռավորությամբ անցնող D=160մմ խողովակից՝ D=110մմ պոլիէթիլենային խողովակով: Միացման տեղում կառուցվում է փականային դիտահոր: Եվս 2 դիտահոր նախատեսվում է հակահրդեհային ստորգետնյա հիդրանտների համար:

Տարածքի անձրեվաջրերը եվ ձնհալքի ջրերը հեռացվում են հեղեղատար համակարգի միջոցով: Ջրերը լցվելով դիտահորերի մեջ, խողովակաշարի միջոցով հեռացվում են դեպի ջրհավաք հորը: ընդհանուր առմամբ տեղադրվում է թվով 9 դիտահոր: Կիրառվում են պոլիէթիլենային ծալքավոր Ø200-250մմ խողովակներ:

Ճանապարհի հետ հատման վայրերում խողովակները անց են կացվում պողպատյա պատյանի միջով: Խողովակները մոնտաժելուց հետո փորձարկվում են: Մանրամասն պահանջները ներկայացված են նախագծի գծագրական մասում:

**Արտաքին Լուսավորություն**

Արտաքին լուսավորության հենասյուները նախատեսվում է տեղադրել 150x150x7մմ քառակուսի խողովակներով: Բարձակները նախատեսված է իրականացնել 100x50x4մմ ուղղանկյուն խողովակից: Լուսավորությունը նախատեսված է իրականացնել արևային ֆոտովոլտային պանելներով՝ **արևային ֆոտովոլտային վահանակ բազմաբյուրեղ 700x515x4մմ 1,5մմ պատի հաստության 17,6 ՕԳԳ,10 տարվա էֆեկտիվության անկումը ոչ ավել քան 20% - 30հատ:**

Լուսատուները նախատեսված է ԼԵԴ 100Վ-4000K հզորությամբ: Լուսավորության հենասյուների համար առանձին հողանցման աշխատանքներ նախատեսված չէ, քանի որ լուսավորությունը իրականացվում է 24Վ հզորությամբ հոսանքով: Հենասյուները նախատեսվում է ներկել էմալային ներկով: Ներկումից առաջ հենարանները պետք է մաքրվեն մետաղական խոզանակով՝ բացառելով ցանկացած տիպի կոռոզիոն հետքեր, դրանից հետո դրանք պետք է ներկվեն ներկի նախաշերտով, ապա այդ ամենից հետո պետք է իրականացնել վերջնական ներկման աշխատանքերը: Լուսավորության ԼԵԴ տիպի լուսատուների համար Կապալառուն պետք է ներկայացնի նվազագույնս 10 տարվա երաշխիք: Շինարարական աշխատանքները պետք է իրականացնել կից ներկայացված նախագծի համապատասխան: Մանրամասն պահանջները ներկայացված է գծագրերով և ծավալաթերթով:

**ԲԵՏՈՆԵ ՀԻՄՔԵՐ**

Բետոնե հիմքերը պետք է իրականացնել B20 F150 դասի բետոնով: Բետոնացման աշխատանքները իրականացնելիս խստորենս պետք է հետևել նորմատիվային պահանջներով նախատեսված պահանջներին: Բետոնե հիմքի իրականացումից հետո 14 օր Կապալառուն իրավունք չունի դրանց վրա տեղադրել որևէ բեռնվածք: Հիմքերի խարիսխների տեղադրումը պետք է իրականացնել 1վրկ ճշտությամբ էլեկտրոնային նիվիլերով կամ տախեոմետրով: Խարսխային հեղուսների շեղումը չի թույլատրվում ավել քան 2մմ-ը:

Բետոնե հիմքերում նախագծով նախատեսված ամրանները պետք է տեղադրվի խստորեն հետևելով նախագծով տրված չափերը: Շեղումը չպետք է գերազանցի 1սմ-ը: Բետոնե աշխատանքները պետք է իրականացնել համաձայն ՀՀՇՆ 52-01-2020թ նորմատիվային պահանջի համաձայն: Բետոնե աշխատանքները չի թույլատրվում

իրականացնել -5C0 -ը ցածր: Շոգ եղանակներին բարձր +25C0 բետոնացման աշխատանքները իրականացնելուց հետո այն պետք է խնամվի՝ օրեկան 2-3 անգամ ջրելով, թաց կտորների օգտագործմամբ կամ մանրացված թաց փայտանյութ /թեփ/ օգտագործմամբ:

### Ճանապարհային գծանշում և Նշաններ

#### *Ճանապարհային գծանշում*

Համապատասխանությունը, նմուշառումն ու հետազոտությունը պետք է Կապալառուի կողմից իրականացվեն համաձայն հետևյալ ստանդարտների: Նախագծով նախատեսվում է իրականացնել թերմոպլաստիկ տիպի գծանշում: Այն պետք է համապատասխանի ներքոբերված ստանդարտ պահանջներին:

- *ГОСТ 32830-2014, ГОСТ52290-2004, ГОСТ52256-2011 կամ /AASHTO T 250 /- Ջերմապլաստիկ ճանապարհային գծանշման նյութ*
- *Լուսանդրադարձման չափանիշները պետք է համապատասխանեն ГОСТ52290-2004-ի և ГОСТ52256-2011 պահանջներին:*
- *Թերմոպլաստիկ գծանշման հաստությունը պետք է լինի ոչ պակաս 3մմ –ը: Թույլատրելի շեղումը սահմանված է 0.5մմ:*


Սլաքների և ձևավոր գծանշումները չափազրվում են նախագծով նախատեսված չափերի հիման վրա: Չափումները պետք է իրականացնել գծանշման եզրային մասով՝ հաշվի առնելով բոլոր բեկյալները և ջարդման անկյունները, ըստ փաստացի գծանշված մակերեսի:

#### Ճանապարհային նշաններ


Ճանապարհային նշանների տեղադրումը պետք է համապատասխանի ГОСТ52289-2019 տեխնիկական ցուցանիշներին: Լուսանդրադարձման գործակիցները պետք է համապատասխանեն ГОСТ52290-2004-ի պահանջներին: Ճանապարհի երթևեկության կազմակերպման համար նախատեսված նշանները տեղադրվում են Փ57x4մմ տրամագծով խողովակների վրա: Մետաղական խողովակները պետք է լինի ներկված էմալային ներկով կամ գործարանային արտադրությամբ ցինկապատված: Երթևեկության կազմակերպման նշանների տեղադրիչը պետք է տեղադրել նորմատիվային պահանջին համապատասխան: Ցինկապատված խողովակների ցինկապատման հաստությունը պետք է լինի ոչ պակաս 0,55 մկմ:



1.5.3 Նախատեսվող գործունեության իրավիճակային հատակագիծ








## ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

<<ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՕՂԱՆԱԿԱԿԱՅԱՆՆԵՐ>> ՓԲԸ իր Հոդատվացման հիմքը

Երևան Երևան Մարտիկա -Սեբաստիա Իսահակ Գասպարյան փող. հ. 34

Մասշտաբ 1: 15 000



Հ Ո Ղ Ա Մ Ա Ս				ԲԱՐԵՆԱԿԱՂ ՑԱՐՄԱՔ				ԱՌՅՈՎԱՅԱՆԱՅԵՂԻ					
Մակերես (հա)	Ընդհանուր հողամաս 343.2 հա Բարելավվող տարածք 0.650 հա	Հողընթացներ		Պատկ. համար	Տարածք (հա)	Հողընթացներ		Պատկ. համար	Տարածք (հա)	Հողընթացներ		Պատկ. համար	Տարածք (հա)
		1	2			1	2			1	2		
Մակերես (հա)		1	8449913 66	4449190 76	301.00	1	8449939 99	4447114 29	10.11	1	8449906 90	4447030 35	64.01
		2	8449914 63	4449193 89	170.90	2	8449937 00	4447104 58	16.32	2	8449905 99	4449993 80	36.02
		3	8449930 60	4449297 39	1142.90	3	8449934 13	4447098 02	24.61	3	8449977 00	4449975 51	63.99
Ծածկագիր	01-007-0571-0001	4	8447193 53	4449298 51	283.82	4	8449938 99	4447094 47	24.68	4	8449978 13	4447942 14	35.85
		5	8447199 67	4449471 46	817.43	5	8449915 64	4447023 76	21.74	5	8449906 90	4447030 35	35.85
Նպատակահիմն Էջանակություն	Ընդհանրահիմն, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների	6	8448239 02	4449490 06	102.07	6	8449907 72	4447023 45	27.89				
		7	8449311 61	4449528 34	59.28	7	8449900 51	4449996 02	20.34				
		8	8449341 56	4449579 61	14.05	8	8449903 37	4449977 47	9.64				
Գղթնահիմն Էջանակություն	Ձրանսպորտի	9	8449353 19	4449598 02	51.84	9	8449909 19	4449999 79	8.56				
		10	8449402 00	4449903 07	12.74	10	8449904 99	4449999 1.34	19.64				
Հողամասը Ծանոթացրե՞լ		11	8449407 65	4449991 7.29	27.44	11	8449974 19	4449994 04	7.20				
		12	8449403 97	4449994 46	27.44	12	8449970 63	4449998 66	59.20				
		13	8449402 96	4449997 1.66	27.44	13	8449923 49	4449974 46	36.83				
		14	8449404 61	4449999 26	27.44	14	8449947 94	4447004 73	2.75				
		15	8449409 52	4449726 30	27.44	15	8449949 72	4447006 74	27.36				
		16	8449417 03	4449752 69	27.44	16	8449966 64	4447008 24	2.73				
		17	8449427 26	4449778 16	27.44	17	8449968 70	4447009 02	32.93				
		18	8449440 09	4449902 42	27.44	18	8449988 91	4447096 03	2.75				
		19	8449495 39	4449925 20	27.44	19	8449990 99	4447097 83	2.75				


Կատարող \_\_\_\_\_ Երևանի Ղախարչյան 25.05.2020 թ.  
 Որակազրկման վաթսույն 0243 29.10.2012 թ.

Իրավաբանական անձի 264.110.78562 <<Գեոնախիս>> ՍՊԸ 4.8

## ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

<<ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱՋԱԶԻՆ ՕՐԱՆՍԿԱԿԱՅԱՆՆԵՐ>> ՊԲԸ ին Հողատեղաման հիմքը  
 Երևան մարզ Մարտիրոս-Սեբաստիա վարչական շրջան Իսահակ Գառաբաղյան փող. հ. 34 հասցե

Մասշտաբ 1:3 000




Մակերես (հա)	Օճի/համար հողամաս 343.2 հա Բարելավող տարածք 0.850 հա	Հ Ո Ղ Ա Մ Ա Ս			Տեղամասի համար/հողատեղաման համար/հողատեղաման համար	ԲԱՐԵԼԱՎՈՂ ՏԱՐԱԾԷ			Տեղամասի համար/հողատեղաման համար	ԱՌՏՈՒԿԱՅԱՆՆԵՐԻ			
		Տեղամասի համար	Ներքին/Գաղարկ	Տեղամասի համար		Տեղամասի համար	Ներքին/Գաղարկ	Տեղամասի համար		Ներքին/Գաղարկ	Տեղամասի համար		
19	844846.38	444882.20	27.44		1	844899.89	447114.26	10.11		1	844896.80	447020.35	64.01
20	844847.2.98	444884.26	27.44		2	844893.05	447104.58	16.32		2	844885.99	446993.89	36.02
21	844848.68	444886.36	27.44		3	844894.13	447098.02	24.61		3	844887.00	446997.51	63.99
22	84489.4.27	444888.31	27.44		4	844898.89	447094.47	24.68		4	844887.13	447042.14	35.85
23	844890.51	444889.90	27.44		5	844891.44	447043.78	21.74		1	844896.80	447020.35	35.85
24	844892.15	444893.98	27.44		6	844897.72	447023.45	27.89					
25	844893.82	444895.42	27.44		7	844890.51	446996.02	20.34					
26	844894.54	444892.11	27.44		8	844893.37	446977.47	19.64					
27	844895.1.70	444892.99	27.44		9	844888.18	446998.79	8.84					
28	844896.13	444893.01	27.44		10	844884.98	446991.34	19.64					
29	844898.51	444892.15	27.44		11	844874.18	446994.04	7.20					
30	844873.54	444892.44	27.44		12	844870.83	446938.88	59.20					
31	844874.84	444891.93	27.44		13	844821.49	446974.48	38.63					
32	844875.71	444891.88	6.12		14	844847.84	447034.73	2.75					
33	844898.41	444717.39	332.56		15	844849.72	447036.74	27.36					
34	844898.27	444758.97	24.87		16	844888.64	447028.24	2.73					
35	844899.26	444894.65	74.85		17	844888.70	447030.02	32.93					
36	844898.83	444887.80	28.00		18	844888.91	447036.03	2.75					
37	844900.22	444888.81	28.00		19	844890.99	447057.83						

Կատարող \_\_\_\_\_ Եղարտի Ղանաթյան 25.05.2020 թ.  
 Որակավորման վկայական 0243 29.10.2012 թ.  
 (Քանոն) (Քանոն)

Իրավաբանական անձի 264.110.78562 <<Գեոմաթիս>> ՍՊԸ 48  
 (Պետական գրանցման համար) (Տարածություն)


1.5.4 Շինարարական հրապարակի կազմակերպման հատակագիծ







1.5.6 Հուսավորության սյուների տեղադիրք





1.5.7

Կանաչապատման սխեմա





## 2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՍԵԽՆՈՒՈՒՄԻՆԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1©Աշխատանքների բնույթից ելնելով<sup>ա</sup> բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

